

Մի հատ 5% գրամագումակ Ասուղախանաց քաղաքական բան- կի, ուսուեալ յանուն դուրսցաց ի 15էն փետրվարի 1879 ամի և 354. գումարաւ 1.100 ր. ի տեղի նպաստաց, ընդհանարար 236. (1000 ր.) եւ և 206. (100 ր.) որոց կատարեալ էր առհմանեալ ժամանակն	1100 ..	Հասուցան չոդաբործուի դրայ- րոցաց Յովհաննէս Վարդապետի Նիրակումնէոյ ի վճար յինքենէ փետրվարար արարեալ ժամանց յընթաց մայիսի 1879 ամի, ի պատճառս պակասութեան ե- կամտից	23 50
Օսմիկ ուսուցչի Դրեթորի Միւս- նիրկան վառն մայիս ամսոյ, սպալմամբ կրկնակի ցուցեալ ի ժաման ընդ յօդ. 103—116 .	12 50	Հնդամինն ծախք 1879 ամի Մնան առ 1880 թուականն. ա. Գրամատումանիք առ գումարաւ 7525 ր. եւ ր. Առ Ճեռն պատրաստի գրամք 605—19 կ.	560 74
Փիմարինաքար մատուցեալ ի Հոդաբարձուէ գորսցաց ի Յավ- հաննէս Վարդապետէ Նիրակու- նուոյ, ի պատճառս պակասութեան եկամակց յընթաց մայիսի 1879 ամի.	232 50	————— Ծախք եւ մնացորդք 13737 93	8130 19
1345 ր. Հնդամինն մուտք 1879 ամի Մնացորդք եւ մուտք .	6212 93 45737 93	————— Ծախք եւ մնացորդք 13737 93	

Կ—ՀՀՀՀՀ ԴԴԴԴԴ
ՄԵԼՔԵԼՔԵԼ ՔԱՆ Ք-ԼՀՀՀՀՀՀՀ
Խ. Գ-Դ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ
Յ. Ս-Շ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ

ՆՈՐ ԽՆՉՈՐՆԵՐ.

Նայումեմ ինչպէս մանուկներն ազատ խաղումն բակում,
Նոցա երեսներ զուարթ են, առողջ և բաղդ են յայտնում,
Նոցա ձեռներին չէ զիսկել զեռ ևս կոպիտ աշխատանք,
Նոցա պարզ աչքեր չեն մժնեցնում զեռ ցաւ և հառաջանք,
Նայումեմ նոցա և վերուղղումն իմ մազմանք խորին,
Որ չհանդիպին նոքա տանջանքի գառն բաժակին,
Որ ուրախ օրեր և ազնիւ գործեր լցնեն նոցա կեանք,
Մաքուր և փայլուն լինի ձանապարհ, չխեղդէ զրկանք,
Որ զժուարատար վիշտ և անարդանք նոքա չտեսնեն,
Որ նոր խնձորներ խնձորենիքից միշտ հեռու ընկնեն:

Ի լիտան Բագրատունին.

ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Հնդկաստանի Հայերի Նախկին և Ներկայ վիճակի մասին քանի մի տե-
ղեկութիւններ կքաղենք, Արշալոյս Արարատեան, լրագրից (1880, յուն-
վարի 19), որ զրած է պ. Գ. Գասպարեան:

* Ի ծաղկել Ք.ո զայեցի վաճառականացն ի Հնդիկս ի 1688 ամի գաշնա-
գրութիւն հաստատի ընդ մ.ջ Արեկելեան Հնդկաստանի ընկերութեան և
վաճառականացն Հայոց Սովին, զաշնաղրութեամբ հայկալունիք զտանէն

զհաւասար իրաւունս և արդարութիւնն տուեալ լինի նոցա բացարձակ արտօնութիւն երթևեկութեան ի քաղաքէ ի քաղաք նաւաւ ընկերութեան միջասահման պայմանաւ, տուեալ լինի նոցա արտօնութիւն բնակելոյ յա և իցէ մասին աշխարհին Հնդկաց և աղատօրէն պաշտելոյ զկրօն իւրեանց և կատարելոյ հայրենատուր վաղեմի աւանդութիւնս տուեալ լինի նոցա արտօնութիւն հաւանելոյ ի Հնդկաստանէ ի Զին և ի Մանիլոյ սակս տուրեաւսիկ շահավաճառութեան հաւասար սակարգութեամբ մաքսիւ և այլն ընդ Անգղիացիս: Յետ գաշանցս այսոցիկ հաստատելոյ ընկերութիւնն առանձին պարգևադրով շնորհէ գաղթականաց Հայոց կալուած երկրի որպէս զի կառուցեն անդանօր զեկեղեցին:

Այս եղեւ առաջին գաղթականութիւն Հայոց ի Հնդիկս:

Ապա ի 1735 ամի կամ զայնու ժամանակաւ ի թագաւորել Նաղիր Շահի ի վերայ Պարսից բաղումք ի վաճառականաց յազգէն Հայոց, սրտարեկ ընդ աւաղելի վիճակ քուղայու խոյս տուեալ գաղտագողի ի բանութեանց անդութ արքային անկան ի Հնդիկս և այլուր: Մասն մի ի նոցանէ որ հատուածեցաւ ի Բասրա ի 1760 ամի ելեալ անտի գաղթեցաւ ի Սուրաթ քար Հնդկաստանի, զորմէ լիցի մեզ յետ սակաւուց խոռք:

Թէպէտե արշաւանք Անգղիացւոց ի Հնդիկս ետուն հարուածս սաստիկս Հայ վաճառականացն յապայ ժամանակս այլ ի սկզբանէ այնպիսի ցուցին նորա սէր և համակրութիւն առ Հայս մինչ պարուրել զսիրտ նոցա մինքեանս նա մանաւանդ քաջ զիտելով զմուերմական յարակցութիւն նոցին ընդ Հնդիկ թագաւորաց ոչ ապախտ առնէին զպատեհ մեծարելոյ զնոսա և շնորհելոյ նոցա մեծամեծ արտօնութիւնս ի լրումն գաղտնածածուկ խորհրդոց իւրեանց, ուստի Հայ գաղթականք ի զիպաց և ի պատեհից աստի զտեալ զյաջողութիւն ի սուլդ ժամանակի բարգաւաճեալ հետզհետէ ընդ Հզօր անդղիական պաշտպանութեամբ ճոխեցան մեծաքանակ փարթամութեամբ և ապա յուշ ի կուրծս արկեալ զքաղցր յիշատակ հայրենեաց և զհայրենատուր աւանդութիւնս, որոց պատկառ կային անրիծ սրտիւք ի գաղութս աստ թէն ընդ օտար աստեղօք, ձեռս արկին կառուցանել զեկեղեցիս հայկապս ի յետագայ քաղաքս Հնդկաստանի, ուր հաստատեալ են նոցին տունք և կալուածք:

Սարդի ի 1760 ամի գաղթեցան Հայ վաճառականք աստ և սիրելի ընծայեցեալ զինքեանս յաշս բնիկ թագաւորին զտին ի նմանէ զարտօնութիւն պարապելոյ ի տուրեառս վաճառուց, աջողակի հանդիպեցին բաղդի, և մարթացան ըստ ներելոյ ժամանակին կուտել զթաւական ճոխութիւնս, ուստի և վաճառականութիւնն օր քան զօր ծաւալէր ի մէջ Հայոց անդր ի յառաջազէմ յաջողուածս: Նշանաւոր վաճառականք կացին անզր աղա Յովհանջան Յ. Գէրոքեան, աղա Մկրտիչ Մէլիքնազեան, աղա Գասպար Յովհաննէսեան և այլք բաղումք: Կառուցին զեկեղեցի վայելւաշէն ի փառս Աստուծոյ: և նախանձախին ի հանդիպեցացեալ յառաջազիմութեան աղզին քաջ զիտելով զի տպագրութիւնն (զիպաց բարեպատեհ արգասիք) կցորդէ

և պահէ անկօրուստ զչմռութիւնս ամենայն ժամանակաց հանգանակեցին առատաձեռն նորաստիւք բաւական դռւմար ի պէտս կառուցման ապարանի միոջ ի սուրբն Էջմիածին:

Քայց ի խաղալ և յարշաւել Անգղիացւոց ի Սուրբ և ի բանալ պատերազմաց վաճառականութիւնն Հայոց նուազիլ սկիզբն էառ և ձախորդութիւնք հասին հետզհետէ հայ վաճառականացն Սուրբաթայ թերեւ յարդար պարտուհաս ապերասան և օտարութի ընթացից իւրեանց ի շաւլաց նախնեաց վասնզի զհաւատոյ մասունս խաղալիկ արարեալ ինքեանց ծայրահեղ զառաձեցան: Ի սկիզբն իննետամերորդ գարու սպառեցաւ ճոխութիւնն նոցին և ինքեանք հետզհետէ սնանկացեալ սփուեցան ոմանք ի նոցանէ յայլ քաղաքս Հնդկաստանի և բազումք առ վշտին առետել վճարեցան ի կենաց: Եկեղեցին նոցա թափուր ի պարտութաշաճ իւրոց պերճ զարգուց հիմն յարե խոնարհի արդ ապաստան լեալ անասնոց:

Առաջ աստ կառուցեալ եկեղեցի Հայոց ի 1652 թուականի (թերեւ Հնագոյնն ի մէջ եկեղեցեաց Հայոց ի Հնդիկո) առ թագաւորութեամբ Ակոպարայ: Աստ յիշատակք հինաւուրց Հայոց աղօտ նշմարանօք և թիւ յերեան զան ի տապանաքարինս հայ ննջեցելոց որք շատ են զարթուցանել ի միտս հայկազն ուղեկորի յիշատակս արդարե եղերականս:

Զարդիս ոչ զո՞ն աստ Հայք:

Բարեկ քանի տիտուր կիրք ներգործին յանցաւորն ի տեսիլն յայն: որպէս տոչորի սիրտ ի տեսիլ վայրացն: ուր համազզիք իւր երբեմն բարեբաստիկ վարեալ կեանս:

Յա-բայի: բնակութիւն կալան աստ Հայք ի վախճան եօթնտասներորդ գարու: Եկեղեցին Հայոց ի նմա կառուցեալ և ի 1300 թուականի յանուն սրբոյն Պետրոսի: Կային անդ յառաջն ականաւոր հայ վաճառականք ոչինչ յետեալք ըստ ազգասիրութեան մասին: Ուսումնասիրութեան նոցին ակներե յարացնց հանդիսանայ օճանասփուեան լրազիլն հրատարակեալն երբեմն ի նոսա:

Քայց զարդիս ողբալի ապաջի լինի քեզ տեսիլ: անշուք տեսարան և աւագելի վիճակ թէ ըստ հայրենասիրութեան և թէ ըստ կրօնասիրութեան: Դամինիք սոցա իրքե գաղթականք արարեալ են աստ զեկեղեցի վայելլաշէն և ապսպարեալ սերնդոց իւրեանց անցեալ դնացեալ են ի կենցաղոյս: բայց որդիք և թոռունք նոցին զակատեալք բուռն տենչիւ զիետ նորաձե և օտարութի գաղափարաց կարեն արգեօք յապահովի և ի բարեկարգութեան ունիլ զայն:

Թիւ հայազգի բնակչաց աստ է այժմ արուք իրը 22 և եգք 29: Բալըք 51:

Մոռըք: յեօթնետասներորդ զարուն գաղթեցան աստ հայ վաճառականք որք զերազանց գտան թէ ըստ մեծութեան և թէ ըստ ազգասիրութեան իւրեանց:

Միրելի է ինձ յիշատակել աստ զանուանս արանց ոմանց մեծատանց: որք

պարձանք կացին ազդին հոյեազանց յայսմ քաղաքի:

Առաջար Պետրոս Ասկանեան երեւլի վաճառական հանգիսանայ մեծա-
պէս ի 1720 ամի Բազում եղեն գործք ազգասիրութեան մեծափարթամ
տոնս: Կառուցանէ մեծագումար ծախիք զուրբ Աստուածածնայ եկեղե-
ցին Հայոց ի կատար Երբին բարձու միոյն ուր նահատակեալ ասի Թովմաս
Առաքեալ: Կտակէ յամի 1750 բաւական գումար վանօրէից եկեղեցեաց
և այլն և այլն և որոշէ 26,000 ռուփիս ի պէտս կառուցան հիմնաւոր իմն
դպրոցի ի Ֆուղար բայց կամք ազգասիրին մնայ ապարդիւն ի պատճառս
քանի մի աւազելի հանգամանաց զիպելոյ ի նմին ժամանակի:

Այնպիսի վառվառն հպարենասիրական ոգույ վիճակեալ էր նորա: Մին-
չև ցանկու զկնի մաշուն իւր հանել զիրտն և տանել ի հայրենիս և թա-
ղել անդանօր առերի շիրմաց ազգատոհմին իւր: Ով վեհանձնեայ սրտի:

Աստ նաև աղա Եղուարդ Պափայէլ Պարամեան ոչ միայն մեծանուն
վաճառական հանգիսանայ այլև ազգասիրութեան մասամք ականաւոր ոք:
Ի 1789 ամի կտակաւ աւանդէ և հաստատէ ի Անենետիկ Պափայէլեան վար-
ժարանն ի պէտս դաստիարակութեան մանկանց ազդին ուսումնական
տեսութիւն որոյ յանձնեալ է բազմարդիւն հարց Միփթարեան ուխտի:
Արդի նորա երեց պարոն Աղքասանդր Պափայէլ Պարամեան ի 1815 ամի
անցեալ գնայ ի Անենետիկ ի տեսութիւն միաբանից անդր բնականայ ապա
ի Լոնդոն ուր դաստիարակեալն էր ի մանկութենէ և ի յաջող ճոխ վի-
ճակի ընտրի անդամ պարլամենտին Անդիոյ: Ի 1784 ամի ի Մատրաս Նը-
շանաւոր հանգիսանայ յոյժ աղա Շամիր Սուլթանեան որ գանձեալ զմի-
մոնաւոր ճոխութիւնս հաստատէ զգպրոց զտպարան և զայլ ազգային
հաստատութիւնս Աղա Սամուէլ Մուրատեան բնակիւս սցն քաղաքի բա-
րերար հանգիսանայ ազդին կառուցմամք Մուրատեան վարժարանին ի Փա-
րիզ և որ զարդիս տեղափոխեալ ի Անենետիկ և կցորդեալ ընդ ազգային
դպրոցին անդ վերաձայնի Մուրատ-Պափայէլեան վարժարան: Պարձանք
էին երեմն սոյն քաղաքի նաև աղա Սէթ Սամ Շահմիրեան և Գրիգոր Սա-
մեան երեւլի վաճառականք վերջինս ի 1833 ամի կտակէ զքսան հազար
ռուփիս յանուն իւր հաստատելոյ զգպրոց մի ի Ֆուղար որ և կառուցաւ
ի 1834 ամի և տեսաց մինչև ցամս 1853: յորում ամի սնանկացեալ տանն
Սամեան ի Մատրաս ի կորուստ մատնեցաւ և քսան հազար ռուփի գու-
մանն դպրոցին որ և փակեցաւ ի ցաւ սրտի ճշմարիտ ազգասիրաց:

* *

ԱԵՀԱՓԱԿ Հայրապետը յայտնած էր իւր ցանկութիւնը որ Մայր
Եթոսիս տաճարում գոնէ 50 հատ վայելուչ միաձև ժամաշապիկներ լինին
հանգիսանար օրերի համար: ԱԵՀԱՓԱԿ Հայրապետի այս ցանկութիւնը
Խորէն Վ. Ստեփանէն յօգուտ Ճեմարանի շինութեան նպաստահաւաքման
համար շըջելով հաղորդած էր քանի մի բարեպաշտ անձներին: որոնք յար-
դելով նոյն ցանկութիւնը նուերներ արին նոյն նպատակով:

Յունվար ամսին Թիֆլիս գտնված ժամանակին Խորէն վարդապետը

անձամբ խնդրած էր մօզգոկեցի մեծ. Պ. Յարութիւն Խոսրովեանից Ճեմարանի երգեցող աշակերտների համար ժամաշապիկներ պատրաստելու Նպաստել և մանաւանդ օգնել իւր հայրենի Մօզգոկ քաղաքում լինելի նպաստահաւաքմանը որի մասին ինդրած էր Թիֆլիսից առանձին նամակով քաղաքագլուխ մեծ. Պ. Յովչաննէս Թուշմալեանից և ուրիշներից Պ. Խոսրովեանը Թիֆլիսում ընդհանուր մատեանում 100 մ. Նուիրելով յօդուտ Ճեմարանի շինութեան խոստացաւ աջակցել Պ. քաղաքազիլին Մօզգոկում, ուր գնալու վերայ էր ինքն Եւ աշա մայիս ամսում Խորէն վարդապետը ստացաւ նախ հեռագրով տեղեկութիւն և ապա փոստով քաղաքագլուխ մեծ. Պ. Թուշմալեանից 380 մ., որը ժողովել է ժողովրդին սիրելի Թագէսսա ք. Խոսրովեանը Բարեկ. Թագէսս աւագ քահանայն ինքն ևս նուիրելով 16 մ., առանձին գրութեամբ բարեսիրաւար կխոստանայ այսուհետեւ իւրաքանչիւր տարի նուիրել տասն մանէթ յօդուտ Ճեմարանի, մայիս ամսում ուղարկելով Ճեմարանի վարչութեանը. Ամենախորին շնորհակալութեամբ ընդունվելով Մօզգոկի պատուական և բարեսէր Հայերի նուիրած 380 մանէթ գումարը, որտեղ ինքն մեծ. քաղաքազիլուխը նուիրել է 50 մ. և Պ. Յարութիւն Խոսրովեանը նորից 100 մանէթ, նոյն գումարը միաւորվեցաւ Ճեմարանի աշակերտների ժամաշապիկների համար յառաջազոյն ժողոված գումարին, որով բովանդակը կդառնայ 800 մանէթ. (Կպակասի զեռ ևս 200 մանէթ, 1000 մանէթ կարեոր լինելով)։

Վեհափառ Հայրապետը ստանալով այս նուիրատուութեան աեղեկութիւնը գոհ սրտով օրհնեց մեծ. Պ. Թուշմալեանին, մեծ. Պ. Խոսրովեանին, Թագէսս աւագ քահանային և բոլոր բարեսէր նուիրատուներին։

* * *

Այս տարի Ճեմարանի քննութիւնները սկսվեցան մայիսի 15ին, որոնց ցուցակը աշա կղետեղնք այստեղ։

Ա.	Ա. - - բ չ - ն ե բ	Դ	Ա. - - բ չ - ն ե բ	Դ
45	Ընդհան. Աշխարհապրութ.	Պ.	5 Ֆրանսական լեզու.	Բ. Գ.
,,	Բնագիտութիւն	Ե. Զ.	,, Ռուսական լեզու.	Ե. Զ.
46	Կրօն.	Ա. Բ. Գ.	6 Ընդհան. աշխարհագրութ.	Ա.
47	Մատեմատիկա.	Ա. Բ. Գ.	,, Կրօն.	Գ.
49	Մատեմատիկա.	Դ. Ե. Զ.	9 Ռուսական լեզու Եւ Ռուսական լեզու աշխարհագրութիւն.	Բ.
20	Հայկական լեզու.	Ա. Բ. Գ.	10 Հայաստանի աշխարհագր.	Բ.
22	Ռուսական պատմութիւն.	Դ.	,, Եկեղեցական պատմութ.	Ե. Զ.
,,	Կրօն.	Ե. Զ.	12 Հայկական պատմութիւն.	Գ. Գ.
,,	Բնական պատմութիւն.	Ե.	13 Հայկական մատենագրութ.	Ե. Զ.
23	Ռուսական լեզու.	Ա. Բ. Գ.	14 Սկզբունք բնական պատմ.	Ա.
24	Ռուսիայի պատմութիւն եւ ընդհանուր պատմութիւն	Ե.	16 Զայնագրութիւն.	Ա. Բ. Գ.
26	Հայկական լեզու.	Պ.	,, Բնական պատմութիւն.	Գ.
,,	Տիեզերագրութիւն.	Զ.	18 Տաճկերէն.	Ա. — Զ.
28	Ծնդհանուր պատմութիւն.	Դ.	,, Նկարչութիւն.	Գ. — Զ.
50	Ընդհան. աշխարհագրութ.	Բ. Գ.	,, Վայելչագրութիւն.	Ա. Բ.
,,	Ֆրանսական լեզու.	Ե.	19 Բնական պատմութիւն.	Ա.
2	Ֆրանսական լեզու.	Պ. Զ.	,, Տրամարանութիւն	Ե.
,,	Ռուսիայի պատմութիւն.	Զ.	20 Հայերէն շարադրութիւն.	Ե. Զ.

* * *

Վեհափառ Կոմողիկոսը բարեհաճեց շնորհել հետևեալ կոնդակներ մինչև մայիսի 15ը:

Կոնդակ յանձնեն և ի պատասխանի գրութեան Ներսէս Արքապիսկոպոսի կ. Պօլսի Պատրիարքին, որով կ յայտնէ գոհունակութիւն նորան և երուսաղէմի Ս. Յակոբեան վանքի պարտքերը վճարելու համար յանձնաժողովին, աւելացնելով միանգամայն, որ զրեթէ ամեն տեղից Թիւքրիայից, Պարսկաստանից և Առուսիսից, մանւանդ մերձակայ տեղերից բազմաթիւ Ալաշկերացիների հետ կղիմեն առ մնքն (Վեհափառ Հայրապետը) և թախանձելով օգունթիւն և հաց կինըրեն, որ և կհոգայ միջացների և ժամանակի ներելու համեմատ: Ապրիլի 28, չ 209:

Կոնդակ Պարուներին անօւնով: Խոտուածատուր Զունդի, Յակոբ Նորատունկեանի, Յովհաննէս Կիւմի, շետնի, Աններեիրիմ Մանուկեանի, Անրովեէ Կիւլպէնկեանի և Անրիչէն Բժշկապետի, Երուսաղէմի Ս. Յակոբեան վանքի պարտքերը բառնալու յանձնաժողովի անդամներին, որով կօրհնէ և կերախուսէ նոցա նոցն վանքի համայն պարտքերը թօմափիլու համար Ապրիլի 28, չ 210:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Աղքասանդրապօղի նազարէմ Մատոյեանին, որ ինքնին ուստած է ամեն տարի մինչև մահը 20 բուրլի նուիրել Մայր Ամսուս Գ. Ճեմարանին 1880 թուից, առաքելով այժմ Ներկայ տարվան 20 բուրլի: Ապրիլի 28, չ 211:

Կոնդակ Վազախի Կողը զիւղի ծխական զպրոցի նորընտիր հոգաբարձուներին, Արգար քահ. Տէր Յարութիւնեանին, Աղքասանդր Խարաբեանին, Կարապետ Խաչյեանին և Մարտիրոս Երովինեանին, որով կհաստատէ նոցա դպրոցին հոգաբարձունեամբ: Ապրիլի 28, չ 212:

Կոնդակ Սամուել քահանայ Սովորմնեանին, Աղախան Կանոյեանին և Լեռն Տէր Յարութիւնեանին Իզգիրի երկսեռ զպրոցների հոգաբարձուներին որով կյայտնէ իւր գոհունակութիւնը և կօրհնէ նոցաիրեանց փոյժեանդ աշխատութիւնների համար նոցն զպրոցների մասին: Մայիսի 1, չ 216:

Կոնդակ Ալեքթու զիւղի զպրոցի նորընտիր հոգաբարձուներին, որով կհաստատէ հոգաբարձունեամբ զովականում Յովհաննէս քահ. Տէր Անետիսեանին, Յարութիւն Խոտուածատրեանին, Գրիգոր Մնացականեանին, Յակոբ Քարսեղեանին և Մնացական Կարապետեանին և կպատուիրէ միանգամայն աշալը գութունեամբ վարել իւրեանց պաշտօնը: Մայիսի 1, չ 218:

Կոնդակ նորընտիր հիմնադիր անդամներին ուսութիւնասիրական ընկերութեան Եղիշէի սրբազան Առաքելոցն Ըզուանից նուիւոյ, որով կհաստատէ յիշված ընկերութիւնը և նոցա կանոնադրութիւնը և կյորգորէ նուիւու հոյեական զպրոցների յառաջադիմութեան համար ջանեալ: Մայիսի 11, չ 219:

Կոնդակ Թիֆլիսի Գայիանեան օրիորդական հոգեւոր վարժարանի վարչութեան անդամներին, որով կգովիէ նոցն վարչութեան եռանդրուն գործունեութիւնը և միանդամայն նոցա խրախուս սելու համար նոցն վարժարանի տնօսեական կառավարութեան դրամական նպաստ կաւելացնէ, յատկացնելով Սովորմն Պապէեց Մազնու Ս. Գէորգ եկեղեցուն կտակված գումարների տարեկան մուտքի կէս մասը: Մայիսի 11, չ 220:

Կոնդակ Թիֆլիսի Մողնու թաղի Ս. Գէորգ եկեղեցու անունով, որով կպատուիրէ կատարել պատարագ և հոգեհանդիստ ամեն տարի Համբարձման օրը Սովորմն Պապէի համար և նորա կոտակաւանդ գումարով գնել նոցն եկեղեցու անունով կալուած և տարեկան տոկոսին կամ արդիւնքը երկու հաւասար մասեր բաժանել: մին յատկացնել Գայիանեան օրիորդական վարժարանին և միւսը նոցն եկեղեցու քահանաներին պաշտօնադրում: նոցա բաժին է տասն հազար ութն հարիւր երեսուն և հինգ բաւրլի: Մայիսի 12, չ 221: